ԿԱՐԾԻՔ

Արշակ Աշոտի Ներսիսյանի «Պետական գնումների համակարգի կատարելագործման ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր շուկայական տնտեսությամբ երկրների ինստիտուցիոնալ համակարգի կարգավորման գործում մեծ նշանակություն ունի պետական գնումների ինստիտուտը, որի գործունեության հիմնական նպատակն է առավել բարձր արդյունավետությամբ օգտագործել պետական գնումների իրավատնտեսական հարաբերությունների շրջանակներում գտնվող ակտիվների օգտագործումը, որը կնպաստի պետության առջև դրված անվտանգային, քաղաքական, տնտեսական և սոցիալական հիմնախնդիրների լուծմանը:

ՀՀ պետական գնումների համակարգը բավական բարդ, դինամիկ և ստոխաստիկ բնութագիր ունեցող ինստիտուտ է, դրա մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ սկսած 2017 թվականից պետական գնումների կազմակերպման կարգը փոփոխությունների է ենթարկվել շուրջ 17 անգամ: Վերջինովս էլ պայմանավորված են պետական գնումների համակարգի արդյունավետության պատշաճ մակարդակ ապահովելու խնդիրները, ինչին էլ նվիրված է ատենախոսությունը և որով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության օբյեկտը ՀՀ պետական գնումների համակարգն է, իսկ հետազոտության առարկան՝ պետական գնումների կազմակերպման գործընթացում առկա խնդիրներն են, դրանց լուծման ուղիները:

Ատենախոսության նպատակն է հանդիսացել ուսումնասիրել և վերլուծել ՀՀ պետական գնումների ինստիտուցիոնալ համակարգի տեսական հիմնավորվածության և գործնական նշանակության առկա խնդիրները և առաջարկություններ ներկայացնել դրանց լուծման ուղղությամբ:

Վերոգրյալ նպատակին հասնելու համար աշխատանքում ներկայացվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել և վերլուծել պետական գնումների տեսամեթոդական հենքը և նշանակությունը երկրի տնտեսության զարգացման համատեքստում,

- Վերլուծել պետական գնումների գործընթացի կազմակերպահրավական դաշտի առանձնահատկությունները ՀՀ-ում,
- Ուսումնասիրել, վերլուծել և տեղայնացնել պետական գնումների արտասահմանյան փորձը,
- Նախանշել պետական գնումների ինստիտուցիոնալ համակարգի գործնական կիրառման արդյունավետության բարձրացմանը խոչընդոտող սահմանափակումները ՀՀ-ում,
- Ներկայացնել ՀՀ պետական գնումների ընթացակարգերի կատարելագործման առաջարկություններ,
- Նախանշել պետական գնումների համակարգի վերափոխումների առանցքային ուղղությունները ՀՀ-ում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնադրույթները և ստացված գիտագործնական արդյունքները, ինչպես նաև ՀՀ պետական գնումների համակարգի կատարելագործմանը նվիրված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր, գործադիր մարմինների կողմից պետական գնումների գործընթացի պլանավորման, կազմակերպման և վերահսկման գործառույթների կատարելագործման ուղղությամբ: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել վերոնշյալ խնդիրներով զբաղվող հետազոտությունների համար: Ատենախոսության հիմնական գիտական նորույթներն են.

1. Պետական գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման տեսանկյունից հիմնավորվել են աութսորսինգի կիրառման հնարավորությունները, որոնք կարող են արտապատվիրակվող ծառայությունների ձեռքբերման ռիսկերը էականորեն նվազեցնել:
2. ՀՀ պետական գնումների համակրգում առկա խնդիրների ներկայացման և լուծման նպատակով առաջարկվել են համապարփակ օրենսդրական փոփոխությունների առաջարկներ,
3. ՀՀ պետական գնումների ինստիտուտի առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրման արդյունքում մշակվել են վերահսկողական մոտեցումների կատարելագործման համալիր կառուցակարգեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը շարադրված է 152 էջի վրա:

Ներածությունում կարևորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության թեմայի ուսումնասիրության աստիճանը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացվել են հետազոտության կարևորագույն արդյունքներն ու գիտական նորույթը, նշվել են հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Պետական գնումների գործընթացի կազմակերպման տեսամեթոդական հիմքերը ՀՀ-ում» գլխում, ներկայացվել է երկրի տնտեսական զարգացման գործում պետական գնումների էությունը և բնութագիրը: Վերլուծվել է պետական գնումների ոլորտի միջազգային փորձը, բացահայտվել են աութսորսինգային քաղաքականության լավագույն մոտեցումները և դրանց կիրառման հնարավորությունները ՀՀ-ում:

Վերլուծվել և գնահատվել են ՓՄՁ ոլորտը խրախուսող միջոցառումների նշանակությունը, պետական գնումների գործընթացի կազմակերպման օրենսդրահիրավական կարգավորումները:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Պետական գնումների համակարգի գործնական դրսևորումները և խնդիրները», ուսումնասիրվել են ՀՀ կողմից վավերացված միջազգային համաձայնագրերը, ծրագրերը, վերջիններիս սկզբունքներն ու նպատակները: Առանձնացվել են ՀՀ-ում գործող, ինչպես նաև արտասահմանյան շատ երկրներում իրականացվող պետական գնումների հիմնական չափորոշիչները:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Պետական գնումների գործընթացի կատարելագործման ուղիները Հայաստանի Հանրապետությունում», քննարկվում են ՀՀ-ում պետական գնումների համակարգի վերափոխման հիմնական ուղղությունները, անդրադարձ է կատարվում էլեկտրոնային գնումների համակարգի զարգացման անհրաժեշտությանը, գնման ընթացակարգերի թերություններին և գնման գործընթացում մարդկային գործոնի դերի նվազեցմանը: Հեղինակի կողմից առաջարկվում են այնպիսի օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու անհրաժեշտություններ, որոնք վերաբերում են գնանշման հարցման ձևով իրականացվող ընթացակարգերին և դրանց բովանդակային նշանակությանը, գնահատող հանձնաժողովների ձևավորման դեպքերին և դրանց նպատակահարմարության հարցը քննելու անհրաժեշտությանը: Այստեղ գիտագործնական առումով հատկանշական է մեկ թվով արտահայտված գնումների գործընթացի արդյունավետության ցուցանիշի ստացումը:

«Եզրակացություններ» բաժնում ներկայացվում են ատենախոսության հիմնական գիտագործնական արդյունքները, եզրահանգումներն ու դրանցից բխող ատենախոսի առաջարկությունները:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացված ատենախոսությունը, ինչպես և համարյա բոլոր ատենախոսությունները, զերծ չէ թերություններից, որոնցից կցանկանայի նշել հետևյալները.

1. Ատենախոսության շարադրանքում բազմիցս օգտագործվում է «երկրի տնտեսական զարգացում» եզրույթը, բայց բացահայտված չէ դրա տնտեսագիտական բնութագիրը: Ցանկալի կլիներ, որ հեղինակը անդրադարձ կատարեր այդ հարցին:
2. Երկրի պետական գնումների գործընթացը կարգավորվում է մեծ թվով իրավատնտեսական ակտերով, օրինակ՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքով, որի հիմնական դրույթները ուժի մեջ են մտնում հրապարակմանը հաջորդող իններորդ օրը: Ո՞րն է այդ ժամանակահատվածի գիտագործնական հիմնավորումը:
3. Հայտնի է, որ պետական գնումների գործընթացում առավել մեծ ծավալի կոռուպցիոն ռիսկեր են ներառում մեկ անձից գնումները: Հեղինակը բավարար չափով չի անդրադարձել այդ գործընթացում գիտագործնական հիմնավորումներով նոր քանակական ցուցանիշներ ներառելուն, որպեսզի վերոնշյալ ռիսկերը զգալի նվազեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ դիտողությունները, սակայն, չեն նվազեցնում ատենախոսությամբ ստացված գիտագործնական արժեքները: Արշակ Աշոտի Ներսիսյանի «Պետական գնումների համակարգի կատարելագործման ուղիները (ՀՀ օրինակով)» հետազոտությունն ինքնուրույն և ամբողջական աշխատանք է: Ատենախոսությունում օգտագործված տեսական մոտեցումներն ու գործնական արդյունքները, ինչպես նաև ստացված գիտագործնական առաջարկությունները հիմնավորված են և ընդունելի: Ատենախոսությունում ներկայացված առաջարկությունները կիրառելու դեպքում դրանք կարող են դրական ազդեցություն ունենալ ՀՀ պետական գնումների գործընթացի կատարելագործման բնագավառում:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր, գործադիր և դատաիրավական համակարգերում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են բավարար բարձր մասնագիտական մակարդակով, դրանց ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ կողմից ներկայացված պահանջներին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրապարակած թվով 6 (վեց) գիտական աշխատանքներում: Արշակ Աշոտի Ներսիսյանի «Պետական գնումների համակարգի կատարելագործման ուղիները (ՀՀ օրինակով)» ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Դավոյան

Պարոն Ս. Ա. Դավոյանի ստորագրությունը հաստատում եմ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի

գիտական քարտուղար Մ.Վ. Հովհաննիսյան

15.01.2024թ.